

ԻՐԱՆԱՀԱՅ ԳՐԶՈՋԱՆՆԵՐԸ (XIII—XIV ԴԴ.)

ՀՄԱՅԱԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Իրանահայ գաղութը սկզբնավորվեց Պարսկահայք և Արտաշ գավառների հիման վրա, որոնց բնակչությունը XI դ. համալրվեց Հայաստանի արևելյան շրջաններից սելջուկյան արշավանքների ընթացքում գաղթեցված բնակչությամբ։ Իրանի (ինչպես նաև բուն Հայաստանի) հայկական բնակավայրերում կյանքի վերականգնման շարժառիթը եղավ Գրիգոր II Վկայասեր կաթողիկոսի աթոռակալ Բարսեղի առաքելությունը սելջուկյան սուլթան Մելիքշահի աթոռանիստը և հայկական եկեղեցու համար նրանից որոշ իրավունքներ ու արտոնություններ ստանալու Այս առաքելության հետևանքներից էր նաև սելջուկյան տիրակալության տարբեր մասերում հայ եկեղեցական կալվածքների ստեղծումը։ Իրանական Ադրբեջանում նման կալվածքներ դարձան եպիսկոպոսությունները և Սալմաստում։ Մ. Չամչյանը գրում է, որ այս եպիսկոպոսությունների ներկայացուցիչները՝ Ղազար ու Ստեփանոս եպիսկոպոսները, մասնակցել են 1179 թ. Հոռմկլայում տեղի ունեցած հայկական եկեղեցական ժողովին¹։ Արդեն այն ժամանակ, նշում է Մ. Օրմանյանը, Ստեփանոս եպիսկոպոսը «Դրանց Պարսից (Թավրիզ—Հ. Մ.) կոչումն ալ կկրէ. իբրև պարսկահայոց համար ընդհանուր հսկող մը»²։

Եպիսկոպոսությունները Սալմաստում և Խոյում, ինչպես նաև ս. Ստեփանոս վանքը, լուսավորության և գիտության այն օջախներն էին, որոնց շուրջը համախմբվեցին իրանահայ գաղութի առաջին մշակութային հիմնարկները։ XII դ. դրանց կից գրչօջախների առկայությունը փաստական նյութի բացակայության պատճառով դժվար է պնդել։

Ըստ ստեղծման տեղի և ժամանակի ձեռագրերի դասակարգումը հնարավորություն է տալիս ի հայտ բերելու գաղութի այդ ժամանակաշրջանի մի շարք գրչօջախներ։ Դրանք են՝ Թավրիզը, Սուլթանիեն, ս. Թադեոս վանքը, ս. Ստեփանոս վանքը և այլն։ 989 թ. էջմիածնում ստեղծված հայտնի ձեռագրի 1332 թ. հիշատակարանը հայտնում է, որ 1173 թ. ս. Ստեփանոս վանքը եղել է գործող եկեղեցական հիմնարկ, որի հոգևոր հայրն էր Գրիգոր քահանան³։ Այս տվյալները հնարավորություն են տալիս ենթադրելու, որ վանքում արդեն այդ ժամանակ զբաղվում էին գրչության գործով՝ ընայած XII—XIII դդ. թվագրվող ձեռագրերի մեզ հայտնի չեն։

Գաղութում XIII դ. գրչության զարգացման մակարդակի մասին այդ ժամանակաշրջանի ձեռագրերը թերի պատկերացում են տալիս, քանի որ դրանցից շատ քերն են մեզ հասել։ Դրանցից ամենահինը՝ 1274 թ. Ուրմիայում ստեղծված ձեռագիրն է, որի գրիչն է Ատոմը⁴։ Ձեռագրի հեղինակն Ուրմիան անվանում է «մայրաքաղաք», երևի ցանկանալով դրանով քնդգծել նրա դերն իբրև համանուն գավառի կենտրոնի։ XIII դ. է վերաբերում նաև Ջարեհավանում՝ Սալմաստ գավառի հնագույն կենտրոնում, ստեղծված ձեռագիրը⁵։

¹ Հ. Չամչյան, Պատմութիւն Հայոց, հ. III, Վենետիկ, 1817, էջ 132։

² Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Ա, մասն Ա, Բելյուֆ, 1959, էջ 1467—1468։

³ Հ. Ոսկյան, Վասպուրական-Վանի վանքերը, մաս Բ, Վիեննա, 1942, էջ 538—539, Գարեգին Ա. կաթողիկոս, Հիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, Անթրիառ, 1951, էջ 450—451։

⁴ Ե. Լալայան, Ցուցակ հայերեն ձեռագրաց Վասպուրականի, պրակ առաջին, Թիֆլիս, 1915, էջ 95—99։

⁵ Նույն տեղում, էջ 131—134։

Քննվող ժամանակաշրջանի մեզ հայտնի մյուս բոլոր ձեռագրերը վերաբերում են XIV դ.: Զգալի թվով ձեռագրերի, գրիչների, ծաղկողների ու վերանորոգողների առկայությունը, հենց իրենց՝ ձեռագրերի, բովանդակությունն ու ձևավորման վարպետությունը վկայում են, որ XIV դ. գաղութում գրչության գործը որոշակի զարգացում է ապրել:

Թավրիզը XIV դ. հայկական գաղութի գրչության մեջ հատուկ տեղ ունի: Կարելի է վստահությամբ պնդել, որ այն քննվող ժամանակաշրջանում հայ գրչության հայտնի կենտրոններից էր: Կիրակոս Գանձակեցու վկայությամբ, Թավրիզում առաջին հայկական եկեղեցիները հիմնադրվել են մոտավորապես XIII դ. 30—40-ական թվականներին՝ այն ժամանակվա հայտնի նեստորական եկեղեցական և քաղաքական գործիչ Ռաբան-Աթալի՝ Իրան և Հայաստան առաքելության ժամանակաշրջանում⁶, Սակայն XIII դ. Թավրիզում գրչագրված ոչ մի ձեռագիր (եթե այդպիսին եղել է) մեզ չի հասել: Գրչության այդ օջախում ստեղծված ձեռագիր նյութերի մասին մեզ հայտնի առաջին հիշատակությունը վերաբերում է 1313 թ.: Մի ժամանակագրության մեջ այդ թվականի տակ հաղորդվում է, որ Թավրիզում «Սարգիս Գիրք» անունը կրող ձեռագիր է գրչագրվել: Այդ ժամանակագրության մեջ այնուհետև ասվում է, որ այդ գիրքը տեղափոխվել է «ի յԱրծիկ է ի մէջ բերդին, ի Սք. Աստուածածնի եկեղեցին»⁷: Այդ տեղեկությունները վկայում են, որ Թավրիզը XIV դ. սկզբներին պետք է լիներ որոշ չափով հայտնի գրչության օջախ, որպեսզի այնտեղ ձեռագրեր պատվիրեին այլ մշակութային կենտրոնների համար: Բացի այդ, XIV դ. առաջին երկու տասնամյակները գաղութում, ինչպես նաև բուն Հայաստանում հայ լուսավորչական եկեղեցու համախոհների և կաթողիկ եկեղեցու հետ միություն կազմելու կողմնակիցների միջև ծագած դավանաբանական կատարյալ վեճերի ժամանակներ էին: Այս վեճերում գլխավոր հակառակորդների դերում հանդես էին գալիս Արտազի և Սյունիքի իշխանությունների տերերը: Վեճերի ընթացքում բավական կարևոր նշանակություն էր տրվում Թավրիզին՝ գաղութի գործարար և մշակութային կենտրոնին: Եվ չնայած Թավրիզում ևս այդ հասանքների ներկայացուցիչների միջև կատաղի վեճեր էին մղվում, հայկական եկեղեցու համախոհների դիրքերն այնտեղ բավական ամուր էին: Ուստի պատահական չէ, որ հենց Թավրիզում հայկական եկեղեցու համախոհները մարտ տվեցին լատինականներին և ունիթորներին, երբ հասավ ժամանակը՝ քանավեճերից անցնելու պրակտիկ գործողությունների: XIV դ. 20-ական թվականներին այնտեղ ստեղծվում է կաթողիկ թեմին հակադրվող եկեղեցական նոր թեմ՝ Մատթեոս եպիսկոպոսի աթոռակալությամբ⁸:

Մատթեոսի աթոռակալությունն աշխույժ գրագրություն առաջացրեց Թավրիզցիների և այլ հայկական համայնքների ներկայացուցիչների միջև: Պահպանվել է, օրինակ, Գլաձորում գործող Եսայի Նչեցու թուղթը Մատթեոսին: Այդ թուղթը, որի մեջ Եսայի Նչեցին, իբրև հոռմեական եկեղեցու հետ միավորման դեմ հանդես եկողների գաղափարախոս և ղեկավար, հանդես է գալիս ընդդեմ «լատինյանների», գրված է մոտավորապես 1330—1335 թթ.⁹: Սյունիքից մի այլ նամակ գրել էր Եսայի Նչեցու աշակերտ Հովհաննես Տարբերունին՝ զբառ խնդրոյ հոգեւոր եղբօրս մերոյ Ասլանի և այլ քրիստոնէից Թավրիժի: Նամակը չափածո էր և ուղղված էր «Հոռոմոց» և «Ֆրոռանի»

⁶ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ՝ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 358:

⁷ «Մայր ցուցակ ձեռագրաց Ե. Հակոբյանց» (այսուհետև՝ «Մայր ցուցակ»), Գ. Հինգեբորդ, Երուսաղեմ, 1971, էջ 97:

⁸ Լ. Ս. Խաչիկյան, Արտազի հայկական իշխանությունը և Մործորի դպրոցը («Բանբեր Մատենադարանի», № 11, Երևան, 1973, էջ 158):

⁹ «Ճռաքաղ», Գ. Կրկորդ, Մոսկվա, 1860, էջ 157—164, 205—211:

դեմ¹⁰։ Ցավոք, Թավրիզից ուղարկված պատասխանները դեռևս չեն հայտնաբերվել։

XIV դ. 30-ական թվականներին Թավրիզում գրչագրվեցին մի քանի ձեռագրեր։ 1334 թ. ոմն Հովհաննեսի պատվերով գրիչ Սարգիսը գրչագրեց «Թողոթի Պողոսի» ձեռագիրը։ Այս ձեռագրի հիշատակարանում անգամ հիշատակվում են տեղի երկու եկեղեցիները՝ ս. Սարգիսը և ս. Աստվածածինը¹¹, որոնք, հավանաբար, կառուցվել են մոտավորապես XIII դ. կեսերին։ 1336 թ. Թումա գրիչը Թավրիզում արտագրել է երկու Ավետարան։ Դրանցից մեկն ընդօրինակվել է ոմն Նասիաթուն տիկնոջ¹², իսկ մյուսը՝ Սարգիս և Աղաթխաթուն ամուսնական զույգի պատվերով¹³։ Վերջին Ավետարանի հիշատակարանում պատմվում է Թավրիզում մահմեդական ֆանատիզմի հերթական բռնկման մասին։

Չնայած իրանում գահի հավակնորդների միջև սկսված պատերազմներին, գրչության գործը Թավրիզում XIV դ. 40-ական թվականներին շարունակում էր զարգանալ։ Այդ են մասնավորապես վկայում Սարգիս և Ներսես գրիչների ստեղծած ձեռագրերը։ Սարգիսի գրչին պատկանում են երկու ձեռագիր. դրանք են՝ 1342 թ. Ավետարանը¹⁴ և 1345 թ. «Չորեքտասան թուղթ Պավղոսի առաքելոյնը»¹⁵։ Ներսես գրիչը 1345 կամ 1361 թթ. ընդօրինակել է մի ժողովածու¹⁶։ Ամենայն հավանականությամբ, նա Թավրիզում գործել է երկար ժամանակ։ Այդ է վկայում Գրիգոր Նարեկացու «Մատենան ողբերգութեան» տարբերակը, որը նա ընդօրինակել է 1377 թ.¹⁷։

XIV դ. վերջերին Թավրիզում ձեռագրերի ընդօրինակմամբ զբաղվում էր մի ուրիշ գրիչ՝ Գրիգորը։ Նա 1394 թ. ժողովածուի գրիչն է¹⁸։ Ժողովածուում զետեղված են կցկտուր, բայց արժեքավոր տեղեկություններ՝ Լանկ-Թամուրի զորքերի դեմ Թավրիզի ադրբեջանցի և հայ բնակչության միացյալ պայքարի մասին։

Գրիչների հետ միասին Թավրիզում գործում էին ձեռագրերի նկարիչ-ժաղկողները։ Նրանցից առավել հայտնի է Ավագ դպիրը։ Նա իր արվեստով փայլեց XIV դ. 30-ական թվականներին։ 1335 թ. Թավրիզում Ավագը նկարագրադրել է մի Ավետարան՝ Բուրթել Օրբելյանի որդի Բեշքենի¹⁹, իսկ 1337 թ.՝ «Նորգարան և տետրակ» կամ «Նազ-գիրքը»՝ սյունյաց մետրոպոլիտ Սարգսի համար²⁰։

XIV դ. Թավրիզում նաև ձեռագրեր էին վերանորոգվում։ Այսպես, օրինակ, 1354 թ. այնտեղ վերանորոգվել է XIII դ. մի ձեռագիր²¹։

XIV դ. իրանահայ գաղութում գործում էր գրչության ևս մի օջախ՝ Սուլթանիեն։ Այնտեղ գրչագրված մեզ հայտնի ամենահին ձեռագիրը թվագրվում է 1326-ով։ Այն շրջագրել է Կարապետ գրիչը՝ վարդապետ Գրիգոր Անեցու

10 Նույն տեղում, էջ 221—227, Մ. Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ Մատենադարան), ձեռ. № 2776, ք. 227։

11 Մատենադարան, ձեռ. № 78, ք. 291բ։

12 Նույն տեղում, ձեռ. № 5019։

13 Նույն տեղում, ձեռ. № 5968։

14 «Ժ Դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» (այսուհետև՝ ԺԴ), կազմեց Ղ. Ս. Խաչիկյանը, Երևան, 1950, էջ 331,

15 Նույն տեղում, էջ 264—265։

16 Նույն տեղում, էջ 344—345։

17 Նույն տեղում, էջ 523—524։

18 Նույն տեղում, էջ 609—610։

19 Մատենադարան, ձեռ. № 212, էջ 310բ։

20 Գարեգին Հովսեփյան, Խաղրակյանք կամ Պողոսյանք հայոց պատմության մեջ, Անթիլիաս-Լիբանան, 1969, էջ 257, 278։

21 Ե. Լալայան, Նշվ. աշխ., էջ 131—134։

պատվերով²², ինչպես երևում է այս ձեռագրի ստացողի անունից ու հիշատակարանի բովանդակությունից, Սուլթանիեում բնակվում էին ծագումով Անիից ոչ քիչ թվով հայեր: Նրանց մեջ էին, ինչպես կտեսնենք հետագայում, նաև գրչական գործի վարպետներ:

Սուլթանիեի մոտ գտնվող (կամ նրա մասը կազմող) Օրտուքազարում 1329 թ. Գրիգոր Նրեցը գրել է մի Ավետարան, որի ծաղկողը և երկրորդ գրիչը եղել է մեզ հայտնի Ավագ դպիրը²³:

1330 թ. գրիչ Բարսեղը Սուլթանիեում ընդօրինակել է մի ուրիշ Ավետարան²⁴: Թվով երրորդ Ավետարանն ընդօրինակել է Մխիթար Անեցին՝ 1334 թ.: Այս Ավետարանը նկարադարձել է Ավագը, նրա հետ միասին Ավետարանի ծաղկման աշխատանքներին մասնակցել է գրիչը՝ Մխիթար Անեցին²⁵, վերջինս չափածոյի է վերածել Աստվածաշունչը, որը ծաղկել է Ավագը (1340 թ.)²⁶: Այդ ձեռագրի հիշատակարանում Մխիթարը հիշում է մայրենի քաղաքը՝ Անին: Մի ուրիշ Աստվածաշունչ, որի ընդօրինակողը հայտնի չէ, ծաղկել է վերոհիշյալ Ավագը: Այն ընդօրինակվել է 1341 թ.: Սուլթանիեից մեզ հասած երրորդ Աստվածաշունչն ընդօրինակել է անհայտ գրիչը: Այս ձեռագիրը չունի ընդօրինակման ճիշտ թվական, բայց նրա հիշատակարանի տեքստից երևում է, որ դա կատարվել է 1341 և 1354 թթ. միջև²⁷: 1356—1357 թթ. Մխիթար Անեցին և գրիչ Ներսես Մանկտավազն ընդօրինակել են մի Ավետարան, որի ծաղկողն ու կազմողը Մխիթար Անեցին է²⁸:

Հուլավյանների պետության փլուզմամբ Սուլթանիեն կորցրեց իր նշանակությունը՝ իբրև Իրանի մայրաքաղաք, իսկ XIV դ. վերջերին—XV դ. սկզբներին՝ Լանկ-Թամուրի հորդանների կողմից քաղաքի ավերումից հետո նրա բնակչությունը տեղափոխվեց այլ տեղեր՝ գլխավորապես Թավրիզ:

Ինչպես հաղորդում է Կիրակոս Գանձակեցին, 1247 թ. Հովսեփ վարդապետը վերականգնեց հնագույն եկեղեցական աթոռը՝ ս. Թադեոս վանքը, որը շուտով դարձավ հայ գրչության կարևոր օջախ: Շուտով ստեղծվեց Աբտաղի հայկական իշխանությունը, որի շնորհիվ զգալաճում ստեղծվեց արաբական և մշակութային կյանքը (այդ թվում և գրչության գործը) զգալի ծաղկում ապրեց: Ս. Թադեոս վանքի գրչատունը ստեղծվեց նրա վանահայր արքեպիսկոպոս Զաքարիայի (մոտ 1303—1337) ջանքերի շնորհիվ: Թեև, ինչպես նշում են ուսումնասիրողները, վանքի գրչագրական հավաքածուում (այն այժմ գտնվում է Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում) հիշվում է XIV դ. վերաբերող ընդամենը 10 ձեռագիր²⁹, բայց դժվար է ասել, թե դրանցից քանիսն են ստեղծվել վանքում: Հայտնի է, որ միայն 4 ձեռագիր է գրչագրվել ս. Թադեոս վանքում: Դրանցից երկուսը ստեղծել է գրիչ Ռստակեսը, որն այնտեղ աշխատել է XIV դ. առաջին տասնամյակներում: 1315 թ. նա ընդօրինակել է մի ձեռագիր՝ «Ներսիսի Շնորհալույ մեկնություն սաղմոսայ», իսկ 1330 թ.՝ մի Ավետարան, որի ծաղկողն է նկարիչ Հովսեփը³⁰: Այդ վանքում գործում էր մի ուրիշ գրիչ՝ Գրիգորը: Նա պատրաստել էր մի «Ժողովածու (ճիշտ թվականը հայտնի չէ)՝ «պարոնտեր» ներսեսի պատվերով³¹: Տեղեկու-

22 «Մայր ցուցակ», հ. երկրորդ, Երևան, 1967, էջ 419—421.

23 Մատենադարան, ձեռ. № 7650.

24 ԺԴ, էջ 230:

25 Л. А. Дурново, Краткая история древнеармянской живописи, Ереван, 1957, с. 48.

26 ԺԴ, էջ 307—312:

27 Նույն տեղում, էջ 328, 406—407:

28 Մատենադարան, ձեռ. № 7740:

29 Օ ն ի կ Ե գ ա ն յ ա ն, Արտաղի Թադեոս առաքյալի վանքի ձեռագրերի հավաքածուն (Երևանի Մատենադարանի), № 10, Երևան, 1971, էջ 401—408):

30 ԺԴ, էջ 114—117, 227,

31 Մատենադարան, ձեռ. № 485:

թյուններ կան այն մասին, որ 1337 թ. ս. Թադեոս վանքում գրիչ Մանվելն ընդօրինակել է Աստվածաշունչը³²,

Ձեռագրեր ընդօրինակում էին նաև Արտագի իշխանությունում գտնվող այլ վայրերում, մասնավորապես Սործորի վանքում՝ Արտագ գավառի այն ժամանակվա մշակութային կենտրոնում և Մակու քաղաքում։ Դրանք, ի դեպ, ստեղծվում էին նաև այդ վանքին կից Սործորի բարձրագույն դպրոցի հիմնադիր Հովհաննես Երզնկացու (Սործորեցի)³³, ինչպես և նրա ուրիշ դասախոսների ու աշակերտների կողմից։

Ինչպես արդեն նշվեց, XIII—XIII դդ. ս. Ստեփանոս վանքում գրչագրված ոչ մի ձեռագիր մեզ չի հասել։ Դրչության այս օջախից մեզ են հասել միայն XIV դ. երկու ձեռագիր։ Դրանցից առաջինը 1325 կամ 1330 թթ. վարդապետ Հովհաննեսի ընդօրինակած մի ձեռագիրն է, ավելի ճիշտ երեք մազադաթյա թերթիկներ, որոնք, ինչպես նշում է ինքը՝ գրիչը, նա արտագրել է ս. Թադեոս վանքում պահվող 649 թ. հնագույն մի ձեռագրից³⁴։ Վանքում ստեղծված մի այլ ձեռագիր Գրիգոր Նարեկացու «Մատենան ողբերգութեան» տարբերակն է։ Այն 1381 թ. ընդօրինակել է Աստու գրիչը³⁵։ Տեղեկություններ կան այն մասին, որ 1356 թ. վանքում ավարտվել է մի ուրիշ ձեռագրի ընդօրինակությունը³⁶,

Այսպիսով, ինչպես ցույց են տալիս փաստերը, XIII դ. վերջերում և XIV դ. իրանահայ գաղութում ստեղծվել է մեզ հայտնի մոտ 30 ձեռագիր։ Գաղութում գրչության դործի զարգացման ամենաեռուն ժամանակաշրջանը XIV դ. առաջին երեք-չորս տասնամյակներն էին, որն ընդհանուր առմամբ համընկնում է տեղի հայկական համայնքների տնտեսական և քաղաքական կյանքի վերելքի ժամանակաշրջանի հետ։

РУКОПИСНЫЕ ОЧАГИ В АРМЯНСКОЙ КОЛОНИИ В ИРАНЕ (XIII—XIV вв.)

АМАЯК МАРТИРОСЯН

Резюме

В XIII—XIV вв. в армянской колонии в Иране действовали рукописные очаги—в Тавризе, Султанье, монастырях св. Фаддея (Татевоса) и св. Степаноса и др. В общей сложности в колонии в тупору было создано около 30 рукописей. Наиболее интенсивным периодом развития рукописного дела в колонии были первые три—четыре десятилетия XIV в., что в целом совпадает с периодом подъема экономической, политической и культурной жизни местных армянских общин.

³² Նույն տեղում, ձեռ. № 3654:

³³ Լ. Ս. Խաչիկյան, նշվ. աշխ., էջ 200:

³⁴ Գարեգին Ա. Կաթողիկոս, նշվ. աշխ., էջ 1:

³⁵ „Documenti di Architettura Armenia, s. Stephanos“, Milan, 1980, p. 18.

³⁶ ՉԴ, էջ 536—537: